կազմակերպության հետ կնքված պայմանագրով նախատեսված շինաշխատանքները ամբողջովին կատարված չլինելու պայմաններում, իրավաբանական նշանակության այդ փաստը հավաստող եւ դրա դիմաց վճարման իրավունք վերապահող՝ աշխատանքներն ամբողջությամբ կատարված լինելը փաստելու վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունում կատարել է կեղծ գրառումներ՝ դրանք ներկայացնելով հիմնադրամ»:

- «Պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու համար կառավարության որոշմամբ ստեղծված հանձնաժողովի անդամները ունենալով պետության կողմից ստեղծված ոչ առեւտրային կազմակերպության անունից կապալառուի համար վճարման իրավունք առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք, իրենց ծառայողական լիազորություններն օգտագործել են ծառայողական շահերին ի վնաս, մասնավորապես դիտավորությամբ չեն արձանագրել թերի կատարված աշխատանքները, կազմել են կեղծ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի արձանագրություն»:
- «Այսպիսով՝ էական վնաս է պատճառվել տվյալ կազմակերպության եւ պետության օրինական շահերին, ինչն արտահայտվել է առանձնապես խոշոր չափերով՝ մոտ 19.547.860 դրամ ավել գումար կապալառու ընկերությանը փոխանցելով»:
- «Բոլոր փաստաթղթերը ՆԳՆ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչությունից կուղարկվեն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե»:

Նշված հրապարակման 8 (ութ) պարբերությունից 7-ը (յոթ) պարունակում են ակնհայտ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, որոնց միջոցով ըստ էության զրպարտել եք «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին, զրպարտել և վիրավորել Տիգրան Նազարյանին, արատավորելով Ընկերության գործարար համբավը և Տիգրան Նազարյանի պատիվը և արժանապատվությունը:

Վերոգրյալի հիմքով պանաջնում եմ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներով հրապարակել հերքում վերոգրյալում նշված յուրաքանչյուր պարբերության մասով:

<u>Կից ներկայացվում է</u>

1) *Լիազորագրերի բնօրինակները*
2) *Նույնականացման քարտի և փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենները*

Փաստաբան՝ Ժիրայր Սաֆարյան